**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

03.12. 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝**
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

**գնահատողներ՝**
- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոմտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Մկրտչյան:

**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Ա. Հովհաննիսյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Հովհաննիսյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Հովհաննիսյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը /հավելված 3, 3.1/ առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ **ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ԱԻ ՍՊԸ-ի** ներկայացված **հավելված N 3.1-ի** ապրանքի **ամբողջական նկարագրում՝ 1-ին,7-րդ և 11-րդ** չափաբաժիններում նշված են ոչ հստակ պարամետրեր կապված ԳՈՍՏ-ի և ՏՊ-ի հետ, այնինչ անհրաժեշտ էր հստակ ներկայացնել մատակարարվող ապրանքի կամ ԳՈՍՏԸ կամ դրան համարժեք ՏՊ-ն:

**Մոսէսքո ՍՊԸ-ի** ներկայացված **հավելված N 3.1-ի** ապրանքի **ամբողջական նկարագրում՝** 4-րդ չափաբաժնում նշված են 2 տարբեր տեսակի ՏՊ-ներ, այնինչ անհրաժեշտ էր հստակ ներկայացնել թե որ ՏՊ-ով ապրանքը պետք է մատակարարվի,և եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է համարժեք այլ ՏՊ-ով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև մասնակցի կողմից նշված ՏՊ-ի կրկնօրինակը, դրա համարժեքությունը ստուգելու և մասնագիտական եզրակացություն կազմելու նպատակով, այնինչ ՏՊ-ի կրկնօրինակը բացակայում է մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը:

Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

**ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջները չեն գնահատվում:**

1.2 11.12.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ԱԻ և Մոսէսքո ՍՊԸ-ների** որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Հովհաննիսյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող ԳԱՊ** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Կ. Մխիթարյան |
| **Գնահատող** | Գ. Ուստյան |
| **Գնահատող** | Ա. Մկրտչյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Հովհաննիսյան |